

ԱՐՏԱՇԵՍ ԲԱՍԵՆՑՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ

ձգարանական փորձաքննությունների բաժնի պետ

ԷԴՈՒԱՐԳ ՇԱԼՁՅԱՆ

Դեպքի վայրի փորձաքննությունների բաժնի պետ

Դատական փորձագետներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՆԻՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀՐԱՉԵՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ
ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ
ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ՉՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դեպքի վայրը տարածության մեջ այն հատվածն է, որտեղ տեղի է ունեցել հանցագործությունը:

Հրագենի կիրառմամբ կատարված հանցագործություններով դեպքի վայրի տեղագնությունը այն-
պիսի քննչական գործողություն է, որն արտահայտվում է գործի համար նշանակություն ունեցող փաստա-
կան տվյալներ հայտնաբերելու և ամրապնդելու նպատակով, ինչպես նաև դեպքի վայրի և դրա նյութա-
կան հետքերի անմիջական ուսումնասիրման մեջ:

Դեպքի վայրի պահպանումը և տեղագնությունը անհետաձգելի քննչական գործողություններ են,
քանի որ դրա հապաղումը կարող է հանգեցնել դեպքի վայրի անվերականգնելի փոփոխությունների:

Հրագենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի պահպանման և դրա հետագա տե-
ղագնության ժամանակ պահանջվում են ոչ միայն քրեագիտական մշակում անցած դեպքի վայրի զննու-
թյան ընդհանուր դրույթների կիրառում, նաև այլ գիտությունների բնագավառների հատուկ գիտելիքների
կիրառում:

Հրագենի կիրառմամբ հանցագործություն կատարած անձը, անկախ իր կամքից, դեպքի վայրում
թողնում է ոչ միայն հրագենի գործածության հետքեր, այլ մի շարք իրեղեն ապացույցներ:

Դեպքի վայրի ճիշտ պահպանման և դրա հետագա զննության արդյունքում այդ իրեղեն ապացույց-
ները կարող են նպաստել հանցագործությունների բացահայտմանը:

Հիմնարար բառեր: դեպքի վայր, ձգարանական փորձաքննություն, փանփուշտ, զննակ, պարկուճ, հետազոտություն, տեղագնում, փորձագետ, եզրակացություն:

Մաս 2-րդ*

**Դեպքի վայրի զննության նախապատրաստումը և
քննիչի սկզբնական**

գործողությունները դեպքի վայրում

Հրագենի կիրառման հետ կապված բռնի մահ-
վան և մարմնական վնասվածքներ հասցնելու գոր-
ծերով դեպքի վայրի զննությունը անհրաժեշտ է
կատարել անմիջապես հաղորդում ստանալուց հե-
տո: Սակայն դեպքի վայրի զննության հաջող անց-
կացման համար պահանջվում է մանրակրկիտ նա-
խապատրաստություն, որը բաղկացած է երկու
փուլից.

1. Նախապատրաստական միջոցառումներ,

որոնք քննիչը իրականացնում է մինչ դեպքի վայր
մեկնելը,

2. Նախապատրաստական գործողություն-
ներ, որոնք կատարվում են անմիջապես դեպքի տե-
ղում:

Մինչ դեպքի տեղ մեկնելը քննիչը պետք է կա-
տարի հետևյալ նախապատրաստական գործողու-
թյունները .

- ա) նախնական ինֆորմացիա ստանա կա-
տարված դեպքի մասին,
- բ) միջոցներ ձեռնարկի դեպքի տեղի պահպա-
նության ուղղությամբ,
- գ) եթե տեղագնությունը ինչ-ինչ պատճառնե-

www.journal.lawinstitute.am

* Տե՛ս Մաս 1-ին, «Արդարադատություն» գիտական հանդես, 2013 դեկտեմբեր 4(23)

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րով հետաձգվում է կամ ուշանում, դեպքի վայրը պահպանող մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի վնասումներից կամ ոչնչացումից պահպանելու համար հետքերը և իրեղեն ապացույցները: Ջենքը, պարկուճները և այլ առարկաները, ինչպես նաև հետքերը, որոնք կարող են փչանալ մթնոլորտային տեղումներից, անհրաժեշտ է ինչ-որ բանով ծածկել: Դրա համար կարելի է օգտագործել դույլեր, արկղեր, տարբեր սարքերի տարաներ, պոլիմերային նյութից տոպրակներ և սեղանի մոմլաթ, ընդ որում, դրանք իրենց չափերով պետք է ավելի մեծ լինեն քան ծածկվող առարկաները կամ հետքերը: Խորհուրդ չի տրվում զենքը, պարկուճները և այլ իրեղեն ապացույցները ծածկելու համար օգտագործել քիմիական նյութերի տարաներ, քանի որ դա որոշ դեպքերում կարող է դժվարացնել քիմիական հետազոտությունը: Եթե կան կասկածանքներ, որ դեպքի վայրով կարող է անցնել ինչ-որ մի տրանսպորտի միջոց, ապա անհրաժեշտ է տեղադրել սահմանափակող նշաններ և կազմակերպել տրանսպորտի շրջանցիկ ճանապարհ:

Խորհուրդ է տրվում վերը նշված գործողություններից առաջ դեպքի վայրը պահպանող մարմնի աշխատակցի կողմից թեկուզ և բջջային հեռախոսի խցիկով լուսանկարել դեպքի վայրը:

դ) միջոցներ ձեռնարկի դեպքի տեղում օպերատիվ բնույթի անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, օրինակ՝ դեպքի վայրը պահպանող մարմնին ցուցում տալ բժշկական օգնություն ցույց տալու համար դեպքի վայր ներկայացած բժշկին նախազգուշացնել, որ նրա կողմից չփչացվեն հետքերը և իրեղեն ապացույցները, ինչպես նաև չփոխվի տուժողի կողքին գտնվող զենքի, զնդակների, պարկուճների և այլ առարկաների տեղակայումը:

դ) լուծի տեղազննության մասնակիցների հարցը,

ե) նախապատրաստի անհրաժեշտ գիտատեխնիկական միջոցներ:

Դեպքի վայրում զննության ժամանակ հաճախակի առաջանում է մասնագիտական տարբեր գիտելիքների կիրառման անհրաժեշտություն: Տեղազննության ժամանակ այս կամ այն մասնագետի մասնակցությունը որոշվում է՝ ելնելով տեղի ունեցած դեպքի բնույթից և առանձնահատկությունից:

Մասնագետի դերը տեղազննության ժամա-

նակ կայանում է նրանում, որ, օգտագործելով իր հատուկ գիտելիքները, օգնում է քննիչին ճիշտ կողմնորոշվել դեպքի պարագաներում, հայտնաբերել, արձանագրել, փաթեթավորել, առգրավել և՛ հետքերը, և՛ այլ իրեղեն ապացույցները, օգտագործել ճիշտ տերմինաբանություն տեղազննության արձանագրությունը կազմելիս և այլն:

Սակայն մասնագետի դերը դեպքի տեղի զննության ժամանակ չի սահմանափակվում միայն տեխնիկական բնույթի հանձնարարություններ կատարելով: Նա կարող է վերլուծել բացահայտված հանգամանքները, փաստերը և դրա հիման վրա հայտնել քննիչին իր նախնական դատողությունները այս կամ այն մասնագիտական հարցի վերաբերյալ:

Ղեկավար դերը դեպքի տեղի զննության ժամանակ պատկանում է հետաքննիչին, քննիչին:

Նա է բաշխում պարտականությունները տեղազննության մասնակիցների միջև, հրահանգավորում նրանց, որոշում տեղազննության մեթոդները և այլն:

Տեղազննությունը, թերևս, այն եզակի քննչական գործողություններից է, որի կատարումը պահանջում է քրեագիտական տեխնիկայի միջոցների ու հնարքների լայն կիրառում: Անկախ նրանից, որ դեպքի վայրում հիմնականում միշտ աշխատում են համապատասխան մասնագետներ, հետաքննիչը, քննիչը դեպքի վայր մեկնելիս իր հետ պարտադիր պետք է ունենա՝

1. լուսանկարչական ապարատ,
2. մետր կամ այլ չափող սարքավորում,
3. մասշտաբային քանոն,
4. ձողակարկին
5. ձեռնոցներ (քննիչը, գալով դեպքի վայր, իր առաջնահերթ գործողություններից մեկը պիտի համարի ձեռնոցներ հագնելը, որպեսզի պատահականորեն նոր հետք չառաջացնի),
6. բինոս և բամբակ,
7. պլանշետ,
8. միլիմետրային թուղթ (սխեմաներ կազմելու համար),
9. տարբեր չափի ծրարներ և ցելոֆանե տոպրակներ,
10. մկրատ, թել և սոսինձ:

Յանկայի է, որ վերը նշված բոլոր պարագաները հետաքննիչները, քննիչները պահեն դեպքի վայր մեկնելու համար նախատեսված ձևաթղթերի

թրթապանակում:

Ներկայանալով դեպքի վայր՝ հետաքննիչը, քննիչը նախքան զննության անցնելը կատարում է մի շարք նախապատրաստական գործողություններ:

1) Առաջին հերթին, գալով դեպքի վայր, հետաքննիչը, քննիչը դեպքի տեղը վերցնում է իր հսկողության տակ, որոշում զննության համար անհրաժեշտ մասնագետների շրջանակը, այնտեղից հեռացնում զննությանը մասնակից չդարձված անձանց՝ անկախ պաշտոնից և կոչումից:

2) Հավաքում է լրացուցիչ տեղեկություններ կատարված դեպքի մասին: Հարցազրույց ունենալով հանցագործության ականատեսների հետ՝ անհրաժեշտ է, ինչքան հնարավոր է, լրիվ պարզել հանգամանքները, որոնց առկայության պայմաններում կատարվել է հանցագործությունը (կրակոցների քանակը, որ կողմից և որտեղ է կանգնած եղել կրակողը, ինչ դիրքում է եղել կրակոցի պահին սպանվածը, որ կողմից էր լսվել կրակոցի ձայնը, որ ուղղությամբ հեռացավ հանցագործը և այլն): Այս հանգամանքների պարզելը շատ կհեշտացնի քննիչի աշխատանքը դեպքի վայրի զննության ընթացքում և հատկապես կրակոցի հետքերի և իրեղեն ապացույցների հայտնաբերման գործընթացում:

3) Որոշում է, թե ինչ աստիճանի է դեպքի տեղը պահպանվել իր գալու պահին: Պարզում է՝ որևէ փոփոխություն չի կատարվել արդյոք դեպքի տեղում: Եթե կատարվել են ինչ-որ փոփոխություններ, անհրաժեշտ է դրանք գրի առնել՝ նշելով, թե ով է տրամադրել այդ տեղեկությունները՝ հետագայում նշված անձին հարցաքննելու նպատակով:

- 4) Հրավիրում է ընթերականերին:
- 5) Բացատրում է տեղազննության մասնակիցներին իրենց իրավունքները և պարտականությունները:
- 6) Նախանշում է տեղազննության պլանը:

7) Կազմակերպում է դեպքի վայրի ընդհանուր զննության կարգը, որը ամեն մի առանձին դեպքում որոշվում է՝ կախված դեպքից և դրա պարագաներից: Անկախ նրանից, թե զննությունը սկսվում է կենտրոնից դեպի ծայրամաս, թե ծայրամասից դեպի կենտրոն, անհրաժեշտ է պահպանել զննության հաջորդականությունը, բաց չթողնելով զննվող տարածքի անգամ մի փոքրիկ մաս: Հաջորդականության պահպանությունը զննության ժամանակ ունի

հատուկ նշանակություն այն դեպքերում, երբ դեպքի վայրում անհրաժեշտ է հայտնաբերել այնպիսի իրեղեն ապացույցներ, ինչպիսիք են՝ զենքը, զնդակները, պարկուճները, միջնորմերը և այլն:

8) Կատարում է կողմնորոշիչ և տեսածիրային նկարահանում:

9) Կազմում է դեպքի տեղի հատակագիծ (պլան):

Չննումը իրականացնում է անձամբ հետաքննիչը, քննիչը, զննության մյուս մասնակիցները օգնում են նրան և գործում են նրա ցուցումներով: Չննումը կարող է և պետք է կատարվի օրվա ցանկացած ժամին, եթե կա գոնե միմիայն լուսավորություն: Եթե զննումը կատարվում է գիշերը, առանց պատշաճ լուսավորության, ապա առավոտյան անհրաժեշտ է անցկացնել լրացուցիչ զննում՝ կազմակերպելով դեպքի տեղի գիշերային պահպանությունը:

Ընդհանուր զննության ընթացքում, ինչպես վերը նշվեց, հետաքննիչը, քննիչը նախանշում է դետալային զննության մեթոդները:

Առավել տարածված է տեղազննության մեթոդների հետևյալ դասակարգումը.

1) զննության ընթացքում ըստ հետաքննիչի, քննիչի շարժման ուղղության,

2) ըստ դեպքի տեղի պարագայի առանձին տարրերի և այնտեղ եղած հետքերի ու իրեղեն ապացույցների ուսումնասիրման եղանակի:

Ըստ առաջին հատկանիշի՝ տարբերում են շարժում կենտրոնից դեպի ծայրամաս (էքսցենտրիկ) և ծայրամասից դեպի կենտրոն (կոնցենտրիկ): Դեպքի տեղի կենտրոն ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե նրա երկրաչափական կենտրոնը, այլ տեղի ունեցած դեպքի առավել կարևոր հանգույցը:

Ինչպես էքսցենտրիկ, այնպես էլ կոնցենտրիկ շարժումը կարող է կատարվել շրջանաձև (պարուրաձև) և գծային (ճակատային) մեթոդներով: Ընդարձակ տարածությունների զննության ժամանակ կարող է օգտագործվել տարածքը սեկտորների բաժանելու և դրանց առանձին զննության մեթոդը՝ հետագայում դրանց արդյունքները միևնույն արձանագրության մեջ արտացոլելով:

Ըստ դեպքի տեղի առանձին տարրերի ուսումնասիրման եղանակի տարբերվում են զննության ստատիկ և դինամիկ փուլեր: Այսպես՝ ստատիկ փուլում հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հետազոտվում են անշարժ վիճա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կում, իսկ դինամիկ փուլում գննությունը շարունակվում է շարժական վիճակում: Ի տարբերություն տեղագնության վերը թվարկված մյուս բոլոր մեթոդների, որոնց ընտրությունը կախված է քննիչի հայեցողությունից, դեպքի տեղի գննության ժամանակ նրա պարագայի առանձին տարրերի գննության ստատիկ և դինամիկ փուլերի հաջորդակալության պահպանումը պարտադիր է:

Առարկաների միջից գնդակների դուրս հանումը, ինչպես նաև հրազենի գործադրման հետքերով առարկաների շարժը պետք է կատարել միայն այն բանից հետո, երբ դրանց տեղակայումը նշված է պլանի, գննության արձանագրության մեջ և լուսանկարված են:

Հրազենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի տեղագնության ընթացքում առաջնահերթ տեղ պետք է զբաղեցնի դիակի գննությունը: Դատաբժշկական փորձագետի ակտիվ մասնակցությունը օգնում է քննիչին ավելի մանրակրկիտ կատարել դիակի արտաքին գննությունը դեպքի վայրում: Շատ հաճախ դիակի արտաքին գննությունը դեպքի վայրում կատարվում է մակերեսորեն, որը անբույլատրելի է՝ նկատի ունենալով, որ դետալային գննումը կիրականացվի հերձարանում:

Դիակի արտաքին գննությունը դրա հայտնաբերման վայրում հանդիսանում է պարտադիր և պետք չէ համարել, որ դետալային գննությունը կկատարվի դիահերձարանում դատաբժշկական հետազոտության ժամանակ, քանի որ դիակի վրա կարող են լինել որոշակի երևույթներ, որոնք ժամանակ անց կարող են փոփոխվել կամ կորչել: Այսպես, դիակի տեղափոխման ժամանակ կարող են անհայտանալ մուտքի և ելքի անցքերի բնորոշ հատկանիշները, օրինակ՝ հագուստի վրա առկա վնասվածքների տեսքը և եզրերի թելիկների ուղղվածությունը, չայրված վառողի մասնիկները և այլն, որոնցով կարելի է որոշել կրակոցի տարածու-

թյունը և ուղղությունը, ինչպես նաև լուծել հարցեր, որոնք գործի համար ունեն էական նշանակություն:

Ջննելով մուտքի և ելքի վնասվածքները՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց ձևի, չափերի, այրվածքի հետքերի առկայությանը, մրտավածությանը, ներդրված վառողի մասնիկների առկայությանը, քսման հետքերի և քերծվածքների տեսքին: Բոլոր վնասվածքները հագուստի և դիակի մարմնի վրա պետք է մանրամասն նկարագրվեն գննության արձանագրության մեջ և լուսանկարվեն մասշտաբային նկարահանման կանոններով:

Խորհուրդ է տրվում մասշտաբային քանոնի բացակայության դեպքում, որպես համեմատական օբյեկտ, օգտագործել լուցկու, ծխախոտի տուփեր կամ կրակայրիչ:

Դիակի արտաքին գննության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դիակի ձեռքերի վրա, քանի որ նրանց վրա կարող են մնացած լինել մրի և չայրված վառողի մասնիկներ: Անհրաժեշտ է դիակի ձեռքերի գննության ժամանակ ուշադրություն դարձնել ձեռքի մեծ մատի և ցուցամատի միջև ընկած տարածությանը, որովհետև զենքի մասերը կրակոցի պահին կարող են արյունազեղումներ և քերծվածքներ առաջացնել այդ հատվածում:

Ելնելով հագուստի և դիակի վրա առկա վնասվածքների մուտքի և ելքի հայտնաբերված վնասվածքների տեղակայումից, դեպքի վայրում առկա պայմաններից, մի քանի դեպքերում կարելի է որոշել այն տեղը, որտեղից կրակոց է կատարվել: Փորձել կատարել, դա անհրաժեշտ է այնքանով, որ այդ տեղը պետք է անհապաղ գննել և այնտեղ գործի համար նշանակություն ունեցող հետքերը արձանագրել և առգրավել:

Օգտագործվել է հետևյալ գրականությունը.

¹ Криминалистика. Белкин Р.С. Издательство НОРМА Москва, 2005г.
² Осмотр места происшествия. Разумов Э.А., Малибога Н. П. Редакционно издательский отдел МВД Украины, 1994г.

Արտաշես Բասենյան
начальник отдела баллистических экспертиз
Эдуард Шалджян
начальник отдела экспертиз места происшествия
судебные эксперты:
Васпур Оганнисян
Владимир Аганякян
Ашот Гаспарян

РЕЗЮМЕ

Понятие места происшествия дел связанных с применением огнестрельного оружия. Особенности сохранения и осмотра места происшествия.

Место происшествия в пространстве является то место, где было совершено преступление.

По делам с применением огнестрельного оружия осмотр места происшествия является неотложным следственным действием, которое выражается в непосредственном исследовании места происшествия и его материальных следов, для выявления и обоснования фактических данных, имеющих значение для дела.

Сохранение и исследование места происшествия является неотложным следственным действием поскольку промедление может привести к неисправимым изменениям.

По делам с применением огнестрельного оружия при осмотре места происшествия и в его последующем осмотре требуются не только применение общих криминалистических знаний в области исследования места происшествия, но и применение специальных знаний в области других научных методик. Лицо, совершившее преступление с применением огнестрельного оружия, помимо своей воли на месте происшествия оставляет не только следы применения оружия, но и ряд вещественных доказательств, которые могут иметь в дальнейшем доказательственные значения в раскрытии преступления.

Ключевые слова: место происшествия, баллистическая экспертиза, патрон, пуля, гильза, исследование, осмотр, эксперт, вывод.

Artashes Basentsyan
Head of Department of Firearm Expertises (Forensic Ballistics)
Eduard Shaljian
Head of Department of expertise scene
Forensic experts:
Vaspur Hovhannisyan
Vladimir Aghanikyan
Ashot Gasparyan

SUMMARY

The concept of crime scene, its preservation and the characteristics of examination of cases connected with the usage of firearm

Crime scene is a location where a crime took place.

Crime scene investigation of crimes committed using a firearm is such an investigative action which is expressed for the purpose of identification and strength of factual datum significant for the case, as well as for immediate examination of crime scene and its material traces.

To protect and investigate the crime scene is an urgent investigative action as the delay can cause nonrecoverable crime scene changes.

During the crime scene protection for cases connected with the usage of firearm and its further investigations, not only the application of general provisions of criminological development for the previous crime scene examinations are required, but also the application of special knowledge of other scientific areas.

Regardless of his will, the person who has committed a crime using a firearm, leaves not only trace evidence of applied firearm in the crime scene, but also a number of material evidence.

As a result of correct conservation of the crime scene and its further examination the evidences can contribute to the detection of crime.

Keywords: crime scene, ballistic, expertise, cartridge, bullet, cartridge case, examination, inspection, expert, report.